ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ 11.05.2026 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԹԻՎ 300-Ա ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետև՝ Պալատ**) խորհուրդը՝ նախագահությամբ Էմին Բեգլարյանի, խորհրդի անդամներ՝ Դավիթ Վարդիկյանի, Լիլիթ Ղազանչյանի, Դավիթ Մելքոնյանի, Ռուբեն Հակոբյանի, Ռոման Ահարոնյանի, Պավել Գյուլումյանի և Արսեն Հարությունյանի,

գրավոր ընթացակարգով քննության առնելով քաղաքացի Լյուսյա Հակոբյանի բողոքը (մուտք՝ 22.06.2026թ. № 1400-26) Պալատի նախագահի 11.05.2026 թվականի թիվ 300-Ա որոշման դեմ,

ՊԱՐԶԵՑ՝

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**.

Լյուսյա Հակոբյանը (**այսուհետև՝ Բողոքաբեր**), դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետև՝ Պալատ**) խնդրել է փաստաբաններ Էդգար Ղարիբյանի, Հասմիկ Բալաբեկյանի և Վահագն Թադևոսյանի (այսուհետև՝ Փաստաբաններ), նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ, քանի որ վերջիններս միտումնավոր չեն վերացրել վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում արձանագրված թերությունները:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահը, 11.05.2026 թվականի թիվ 300-Ա որոշմամբ (**այսուհետև նաև՝ Որոշում**) փաստաբաններ Էդգար Ղարիբյանի, Հասմիկ Բալաբեկյանի և Վահագն Թադևոսյանի (**այսուհետև՝ Փաստաբաններ**) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել է՝ Փաստաբաններին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքի բացակայության պատճառաբանությամբ:

2. **ՀՀ փաստաբանների պալատի նախագահի** 11.05.2026 **թվականի թիվ** 300-**Ա որոշման էությունը**.

Դիմումի և առկա ապացույցների հաշվառմամբ Պալատի նախագահի Որոշմամբ արձանագրվել է, դատավարական փաստաթղթի վերադարձը, առանց քննության թողնելը կամ դատարանի կողմից թերությունների արձանագրումը դրանց վերաբերյալ էթիկայի կանոնների խախտմանը հանգեցնող փաստաբանի կոնկրետ ոչ իրավաչափ վարքագծի մատնանշման բացակայության պայմաններում չեն կարող ինքնաբերաբար դիտարկվել որպես կարգապահական խախտում: Հակառակ մոտեցումը կնշանակի, որ փաստաբանին կարգապահական պատասխանատվությունը կախված է ոչ թե նրա կոնկրետ վարքագծից, այլ դատական ակտի ելքից, ինչն անթույլատրելի է:

Պալատը գտել է, որ Լյուսյա Հակոբյանի դիմումի հիման վրա փաստաբաններ Էդգար Ղարիբյանի, Հասմիկ Բալաբեկյանի և Վահագն Թադևոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը ենթակա է մերժման, քանի որ Դիմումը չի պարունակում Փաստաբանների ոչ իրավաչափ վարքագիծը հիմնավորող բավարար և որոշակի փաստական տվյալներ, ինչպես նաև փաստաբաններ Էդգար Ղարիբյանի և Հասմիկ Բալաբեկյանի նկատմամբ կարգապահական վարույթ չէր կարող հարուցվել նաև Օրենքով սահմանված վաղեմության ժամկետներն անցած լինելու հիմքով:

3. **Բողոքաբերի հիմնավորումները և պահանջը**.

Բողոքաբերը Պալատի նախագահի Որոշման դեմ 22.05.2026 թվականին Պալատի խորհուրդ (**այսուհետև՝ Խորհուրդ**) ներկայացրել է բողոք՝ հղում կատարելով իր նախկին դիմումների շրջանակներում նկարագրված հանգամանքներին՝ ըստ էության պնդելով նույն դիրքորոշումը:

Մասնավորապես, Բողոքաբերի պնդմամբ, Փաստաբանները ոչ պատշաճ իրավաբանական օգնություն են ցույց տվել իրեն, ինչի արդյունքում իր իրավունքները մնացել են անպաշտպան:

Բողոքաբերը, կրկին անդրադառնալով Փաստաբանների վարքագծին, նշել է, որ բացի հանրային պաշտպանից, մյուս փաստաբաններին վճարել է, ունի վճարման անդորրագրեր, ինչի դիմաց իրեն չեն օգնել:

Բողոքաբերը խնդրել է վերանայել դիմումները և արդարացիորեն հարուցել կարգապահական վարույթ Փաստաբանների նկատմամբ:

4. **Փաստաբանների համառոտ դիրքորոշումը**.

Պալատը Փաստաբաններից բացատրություն չի պահանջել:

5. **Բողոքի քննության համար նշանակություն ունեցող հանգամանքները**.

Ներկայացված բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. Փաստաբաններ Հասմիկ Բալաբեկյանը և Էդգար Ղարիբյանը ստանձնել են Լյուսյա Հակոբյանի շահերի պաշտպանությունը 2021-2022 թվականներին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ:*

2. Հանրային պաշտպան Վահագն Թադևոսյանը ստանձնել է Լյուսյա Հակոբյանի շահերի պաշտպանությունը 2025 թվականին: ***Նշված փաստը հաստատվում է*** *Բողոքաբերի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությամբ:*

3. Քաղաքացի Լյուսյա Հակոբյանը դիմել է Պալատ՝ Փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու պահանջով, սակայն 11.05.2026թ որոշմամբ Փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցումը մերժելու որոշում է կայացվել: ***Նշված փաստը հաստատվում է*** *Պալատի նախագահի որոշմամբ:*

4. **<u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>**.

Խորհուրդը գտնում է, որ Պալատի նախագահի Որոշումը պետք է թողնել անփոփոխ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետև՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության նույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար (…)*

Օրենքի 39.3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ *կարգապահական վարույթի հարուցումը մերժվում է, եթե՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են*:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից հետևում է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ կարող է հարուցվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու՝ ***Օրենքով սահմանված հիմքերի առերևույթ առկայության դեպքում***: Ընդ որում, ի թիվս այլնի՝ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք է հանդիսանում նաև Օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ: Ընդ որում, ***այն դեպքում, երբ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն առերևույթ բացակայում են, ապա փաստաբանի նկատմամբ կարգապահական***

վարույթի հարուցումը ենթակա է մերժման:

Վերոգրյալ դրույթների վերլուծությունից նաև հետևում է, որ կարգապահական վարույթի հարուցման համար անհրաժեշտ է հանգամանքների այնպիսի համակցություն, որոնք արտաքուստ, առանց դրանց ըստ էության քննության, ողջամիտ կասկած են հարուցում փաստաբանի կողմից Օրենքի և (կամ) Փաստաբանների վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման վերաբերյալ:

«Փաստաբանության մասին» օրենքի 39.3-րդ հոդվածից հետևում է, որ միայն Բողոքաբերի սուբյեկտիվ պնդումները, գնահատականները կամ ենթադրությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու համար, եթե դրանք չեն զուգորդվում այնպիսի փաստական տվյալներով, որոնք առերևույթ կարող են վկայել փաստաբանի կողմից Օրենքի կամ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների հնարավոր խախտման մասին:

Խորհուրդը, համադրելով բողոքի փաստարկները, դրան կից ներկայացված նյութերը, Պալատի նախագահի որոշումը և գործում առկա տվյալները, արձանագրում է, որ փաստաբանների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու իրավական և փաստական հիմքերն առերևույթ բացակայել են՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Նախ՝ ներկայացված դիմումը չի պարունակել փաստական որոշակիության այն նվազագույն աստիճանը, որն անհրաժեշտ է փաստաբանի վարքագծին նախնական իրավական գնահատական տալու և կարգապահական վարույթ հարուցելու հարցը լուծելու համար: Մասնավորապես, դիմումում բացակայել է յուրաքանչյուր փաստաբանին վերագրվող կոնկրետ վարքագծի նկարագրությունը, հստակեցված չի եղել, թե փաստաբաններից յուրաքանչյուրին ինչ կոնկրետ ոչ իրավաչափ գործողություն կամ անգործություն է վերագրվում, որն է այն ենթադրյալ թերությունը, որը պետք է վերացվեր, և այդ պարտականությունը կոնկրետ որ փաստաբանի վրա էր դրված:

Այս համատեքստում Խորհուրդն ընդգծում է, որ դատարանի կողմից դատավարական փաստաթղթի վերադարձը, այն առանց քննության թողնելը կամ դրա թերությունների արձանագրումն ինքնին չեն կարող որակվել որպես փաստաբանի կողմից վարքագծի կանոնների խախտում: Փաստաբանի վարքագիծը կարգապահական խախտման համատեքստում դիտարկելու համար անհրաժեշտ է նրա կոնկրետ ոչ իրավաչափ գործողության կամ անգործության մատնանշում, ինչպես նաև այդ վարքագծի և առաջացած դատավարական հետևանքի միջև առերևույթ կապի առկայություն: Հակառակ պարագայում փաստաբանի կարգապահական պատասխանատվությունը պայմանավորված կլինի ոչ թե նրա մասնագիտական վարքագծի իրավաչափությամբ, այլ դատական ակտի դատավարական հետևանքով, ինչը հակասում է կարգապահական պատասխանատվության անհատականացման սկզբունքին:

Ուստի Պալատի նախագահը հանգել է իրավաչափ և հիմնավորված հետևության՝

մերժելով Լյուսյա Հակոբյանի դիմումի հիման վրա փաստաբաններ Էդգար Ղարիբյանի, Հասմիկ Բալաբեկյանի և Վահագն Թադևոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը՝ հաշվի առնելով դիմումում փաստաբանների ոչ իրավաչափ վարքագիծը հիմնավորող բավարար և որոշակի փաստական տվյալների բացակայությունը:

Երկրորդ՝ բացի փաստական հիմքերի անբավարարությունից, փաստաբաններ Հասմիկ Բալաբեկյանի և Էդգար Ղարիբյանի մասով առկա է նաև վարույթի հարուցումը բացառող ինքնուրույն իրավական հիմք՝ Օրենքով սահմանված վաղեմության ժամկետների անցած լինելը: Մասնավորապես, «Փաստաբանության մասին» օրենքի 39.2-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված է, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմքը հայտնաբերելուց հետո՝ վեցամսյա ժամկետում, բայց ոչ ուշ, քան հիմքը ծագելուց երկու տարի հետո: Նշված ժամկետներն ունեն իմպերատիվ բնույթ, և դրանց անցնելուց հետո կարգապահական վարույթ հարուցվել չի կարող:

Գործի նյութերով հաստատվում է, որ Բողոքաբերը փաստաբաններ Էդգար Ղարիբյանին և Հասմիկ Բալաբեկյանին վերագրվող ենթադրյալ խախտումների վերաբերյալ դեռևս 2022 թվականին դիմում է ներկայացրել Պալատ և ստացել պատասխան: Հետևաբար Բողոքաբերը նշված փաստաբաններին վերագրվող հանգամանքների մասին տեղեկացված է եղել դեռևս այդ ժամանակ, սակայն Օրենքով սահմանված ժամկետներում կարգապահական վարույթ հարուցելու համար համապատասխան հաղորդում չի ներկայացրել:

Գործում առկա նախկին դիմումների և ընթացիկ բողոքի համադրված ուսումնասիրությունը վկայում է, որ Բողոքաբերի կողմից բարձրացված հարցերը փաստացի վերաբերում են նշված փաստաբանների՝ 2021-2022 թվականներին կատարված գործողություններին: Ուստի Էդգար Ղարիբյանի և Հասմիկ Բալաբեկյանի մասով ակնհայտ է, որ Օրենքով սահմանված վաղեմության ժամկետները պահպանված չեն, ինչն ինքնուրույն և բավարար հիմք է նրանց նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Պալատի խորհուրդն արձանագրում է, որ Բողոքաբերի դիմումում նկարագրված հանգամանքները չեն կարող հիմք հանդիսանալ Պալատի նախագահի Որոշման վերացման համար, ուստի այն մնում է անփոփոխ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Օրենքի 10-րդ հոդվածի 1-**ին մասի**, 39.11-**րդ հոդվածի** 3-**րդ մասի և** 9-**րդ մասի** 1-**ին կետի պահանջներով**,

Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 11.05.2026 թվականի «Փաստաբաններ Վահագն Հայկի Թադևոսյանի, Էդգար Հովհաննեսի Ղարիբյանի և Հասմիկ Վազգենի Բալաբեկյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու մասին» թիվ 300-Ա որոշման դեմ Լյուսյա Հակոբյանի կողմից 22.05.2026 թվականին ներկայացված բողոքը մերժել:

2. Անփոփոխ թողնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 11.05.2026 թվականի թիվ 300-Ա որոշումը:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում այն ստանալու օրվան հաջորդող օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝ **Էմին Բեգլարյան**

22 հունիսի 2026թ.
թիվ ԿԳ/14-Ա
ք. Երևան